

# ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԲԱՅԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՅԱՐԱԴԻՐ ԲԱՅԵՐԻ ՀԵՏ

Էլիզա Ղազարեան

## 1. Բայանուանակամ կալուց կապակցութիւնները գերմանագիտական ուսումնասիրութիւններում

Գերմաներէնի բայանուանական կապակցութիւնները եւ յատկապէս գործառական բայով կայուն կապակցութիւնները (*Funktionsverbgefüge/Strekform*), այսուհետեւ՝ ԳԲԿԿ, լեզուաբանների կողմից ուշադրութեան են արժանացել Համեմատաբար վերջերս: Դա բացատրուում է ընդհանրապէս լեզուում անուանական խմբերի թերարժեւորմամբ: Մինչեւ 1960-ական թուականները բայանուանական կապակցութիւնները քննութեան են ենթարկուել գրեթէ բացառապէս ոճի տեսանկիւնից եւ Հիմնականում քննադատութիւնների թիրախ են Հանդիսացել: Դրանց տրուած հետեւեալ բնորոշումները փաստում են թերեւս, որ լեզուում այս կառոյցների կիրառութիւնը դրական չեն ընկալուել: *Substantivitis* - գոյականների չափազանցուած կիրառութիւն (*Rothkegel 1968: 7*), *Hauptwörterseuche*, որ բառացի թարգմանուում է գլխաւոր բառերի համաճարակ, *Sprachbeulen* - լեզուափուչիկներ, *Papieridiom* - փաստաթղթային դարձուածք կամ *Bureaokratentwort* բիւրոկրատների խօսք (*von Polenz 1964: 17*), պիտակաւորումները գնահատականներ են, որոնց արժանացել են այս կառոյցները եւ դրանցից արդէն իսկ կարելի է եզրակացնել, թէ ինչու են բայանուանական կապակցութիւնները դիտարկուել միայն ոճական, բայց ոչ լեզուական, քերականական իմաստների արտայայտութեան կամ տեքստակազմութեան միջոց:

Ի հեճուելս լեզուաբանների քննադատութիւններին, ժամանակակից գերմանե-

րէնում անուանական ոճի գործածութիւնը գնալով աւելի լայն տարածում է ստանում՝ յատկապէս մասնագիտական տեքստերում: Գոյականացման միջոցով տեղեկատուութեան սեղմումը աստիճանաբար դառնում է այս տեքստերի ամենաբնորոշ յատկանիշներից մեկը: Հարց է առաջանում, արդեօք լեզուի պահպանման եւ լեզուաքննադատութեան, այսինքն՝ «նորաձեւութեան», «լեզուի աղճատման», «այլակերպման» եւ այլ հարցերին առնչուող գիտութիւնների կողմից (*von Polenz 1963a: 7*) ԳԲԿԿ-ներին տրուած բացասական գնահատականները հիմնաւորուած են, եւ արդեօք պէտք է՞ր զբաղուել այս կառոյցների լեզուաբանական-ընթացիկ պարզաբանմամբ ու նկարագրութեամբ: Անհրաժեշտ է, որ ԳԲԿԿ-ների աւելի յաճախակի գործածման միտումն ակնյայտ ազդակ է, որ այս կառոյցները ոչ թէ ուղղակի պարզ կամ համադրական բայերի ոճական տարբերակներ՝ այլ լեզուի համար անհրաժեշտ, երբեմն էլ անփոխարինելի միաւորներ են:

Գերմաներէնում ԳԲԿԿ-ների կիրառութեան նպատակայարմարութիւնը հիմնաւորուում է հէնց դրանց յաճախադէպութեամբ: Անգամ խօսակցական գերմաներէնում՝ գնալով աւելի շատ գործընթացներ են արտայայտուում անուանական ձեւերով, չնայած այն հանգամանքին, որ գերմաներէնի նախատիպային նախադասութիւնը պարտադիր երկանդամ է (ենթակայ, ստորոգեալ կազմով), ընդ որում՝ ստորոգեալը պարտադիր բայական բնոյթ ունի:

Անուանական ոճի կիրառութեան դէպքում ընթացք, վիճակ, գործողութիւն կամ այլ իմաստներ արտայայտելու համար

այդ նշանակութեամբ բայերի անհրաժեշտութիւնը վերանում է, փոխարէնը, սակայն, կիրառուում են համեմատաբար սահմանափակ թուով գործառական բայեր, որոնք բայական հիմքով գոյականի հետ միանալով, ընդունակ են այդ գոյականի համապատասխան իմաստով բայական արտայայտութիւն կազմելու: Իհարկէ, այս կապակցութիւնների շարահիւսական եւ իմաստաբանական առանձնայատկութիւններն անտեսելու դէպքում միանգամայն հասկանալի է, որ դրանք կարող են պարզապէս համապատասխան բայերի ոճական տարբերակներ դիտարկուել, ինչի վկայութիւնը վերը հակիրճ ներկայացուած երբեմն քամահրական, երբեմն էլ կոշտ քննադատական գնահատականներն են:

Ու չնայած քննադատութիւններին՝ առանձին ոլորտների, ինչպէս օրինակ հռետորաբանութեան, պաշտօնական գրագրութեան կամ ակադեմիական ոլորտների տեքստերը պարզապէս «պահանջում են» յաճախակի ԳԲԿԿ-ներ գործածել: Այս ակնյայտ փաստերը դրդեցին, որ Փիթեր Ֆօն Փոլենցը (1963, 1964, 1987), Կառլ-Հայնց Դանիէլսը (1963), Հերբերտ Քոլբը (1962; 1965/66), Հանս-յուրգեն Հերինգերը (1968) եւ այլք զբաղուեն անուանական-բայական կապակցութիւնների աւելի խոր ուսումնասիրութեամբ եւ վերլուծութեամբ: ԳԲԿԿ-ներն այլեւս պէտք է դիտարկուեն ոչ թէ որպէս պարզ բայերի ոճական տարբերակներ, այլ իւրօրինակ քերականական կառոյցներ, որոնք էական իմաստային տարբերութիւններ են հանդէս բերում: Այս նոր մօտեցմամբ խնդիր է դրուում շարահիւսօրէն եւ իմաստաբանօրէն վերլուծելու գործառական բայերը եւ դրանցով կազմուող բայ-անուանական կառոյցները՝ դրանց կիրառութեան օրինաչափութիւններն ու գործառոյթները եւ լեզուի համակարգում դրանց նշանակութիւնը պարզելու համար:

Գերմաներէնի ԳԲԿԿ-ների իմաստաւորութեամբ բային առանձնայատկութիւններն աւելի ակնառու ներկայացնելու նպատակով կը փորձենք առանձին դէպքերում զուգահեռներ անցկացնել հայերէնում նոյն կամ նման կառուցուածքով բայական կայուն կապակցութիւնների հետ: Այդ կապակցութիւնները հայերէնի յարադիր բայերն են, թէպէտ հայ լեզուաբանութեան մէջ դրանք դիտարկուում են որպէս բայական բարդութիւններ եւ հակադրուում են համադրական բայերին:

## 2. Հայերէնի յարադիր բայերի ընդհանուր բնութագիրը

«Եթե հարցնեն, թե ինչն է ինձ ամենից շատ դուր գալիս հայոց լեզուում, իսկոյն կ'ասեմ՝ յարադիրները, յարադիր բայերն առանձնապէս: Վերցնում ես մի որևէ գոյական, կողքին դնում մի բայ, և, խնդրեմ, յարադիր բայը պատրաստ է՝ վառ, տպաւորիչ, պատկերաւոր: Հայոց լեզուն դրա հնարաւորութիւնը տալիս է արտասովոր շոյալութեամբ: Ահա, օրինակ, ձեռք բառը՝ ձեռք բերել, ձեռից գնալ, ձեռք քաշել, ձեռք տալ, գլուխ բառը՝ գլուխ դնել, գլուխ բերել, գլխի ընկնել, աչք՝ աչքով տալ, աչքի ընկնել, աչք ածել, միտք՝ մտքի մեջ ընկնել, միտքը փոխել, մտքումը դնել, մտքի հետ ընկնել: Կան նաև երկու բայից բաղկացած բարդութիւններ: Դրանցից մեկն ուժեղացնում է միւսին և գործողութեան պատկերը դարձնում աւելի ցայտուն՝ պոկուել ընկնել, քշել տանել, մեռնել պրծնել, թողնել գնալ, գնալ հասնել: Յարադրական բայերի ուրիշ, ոչ պակաս տպաւորիչ ձևեր էլ կան՝ ցիր ու ցան անել, տուն ու տեղ դնել, ահ ու սարսափ տարածել, կեր ու խում անել: Յարադիր բայերը գործողութիւնն արտայայտում են աւելի վառ, քան դրանց հոմանիշները: Դրանք կազմում են մեր լեզուի թանկագին հարստութիւնը, ունեն արտայայտչական անսպառ հնարաւորութիւններ և շատ էլ սագում են հայերէնին»:

Լ. Հախունդեանի «Զրոյցներ լեզուի մասին» գրքից այս հատուածը պատկերաւոր ներկայացնում է Հայերէնի յարադիր բայերի ընդհանուր բնութագիրը, հակիրճ տեղեկութիւններ տալիս դրանց կազմութեան, կիրառութեան եւ նշանակութեան մասին:

Հայ լեզուաբանական գրականութեան մէջ սրանք անուանուած են յարադիր / յարադրական / յարադրաւոր կամ յարադիրով բայեր:

Հայերենագիտութեան մէջ, երկար ժամանակ յարադիր բայերի մանրակրկիտ ու համապարփակ նկարագրութիւն չի եղել: Այդ բացը լրացրել է Ալ. Մարգարեանը՝ իր «Հայերէնի յարադիր բայերը» ծաւալուն աշխատութեամբ: Այս աշխատութեամբ նա ի մի է բերել յարադիր բայերի վերաբերեալ մինչ այդ եղած բոլոր ուսումնասիրութիւնները, վերլուծել եւ ամփոփել է հետաքրքիր դատողութիւնները եւ ներկայացրել սեփական մօտեցումներն ու հիմնաւորումները:

Ըստ Ալ. Մարգարեանի՝ Հայերէնում յարադիր բայերի գոյութեան մասին առաջին անգամ յիշատակուել է Կղեմէս Գալանոսի «Քերականական եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ» աշխատութեան մէջ (Ալ. Մարգարեան, 1966, 22): Յարադիր բայերին անդրադարձել է նաեւ Խ. Աբովեանը: Նա նշել է յարադրաւոր բայերի դերի ու նշանակութեան մասին ժողովրդախօսակցական լեզուում կոչելով դրանք բարդ բայեր (տես Ալ. Մարգարեան, 1966: 23): Հայերէնի յարադրաւոր բայերի լուսաբանման հարցում յատկապէս մեծ աւանդ է ունեցել Մանուկ Աբեղեանը: Նա ծանրակշիռ հիմնաւորումներով ցոյց է տալիս, որ դրանք բարդութիւններ են, որտեղ «բայն ու յարադիրը միասին ստանում են մեկ բառի նշանակութիւն եւ ըմբռնում իբրեւ մի միութիւն եւ մեկ բառ (Մ. Աբեղեան, 1931: 172):

Հ. Արսէն Այտընեանը ինչպէս նաեւ Հրաչեայ Աճառեանը յարադիր բայերը դիտարկում են որպէս ոճական միջոց, դարձուածներ, որոնք կարեւոր դերակատարութիւն ունեն լեզուում: Ըստ Աճառեանի՝ այս ոճական արտայայտութիւնների մի զգալի մասը թարգմանաբար փոխառուած է թուրքերէնից, ինչպէս օրինակ՝ ականջ կախել, ականջ դնել, ձեռք տալ, ձեռք զարնել, աչքի զարնել, երես տալ, ծեծ ուտել, շունչ քաշել եւ այլն (Հր. Աճառեան, 1951: 287):

Այսպիսով, բայական յարադրական բարդութիւններ են կոչուում որեւէ յարադրից (որը կարող է լինել գոյական, ածական, դերանուն, մակբայ, ձայնարկութիւն, բայարմատ եւ այլն) եւ որեւէ բայից յարադրման միջոցով կազմուած բարդութիւնները, որոնք արտայայտում են իրենց բաղադրիչներից տարբեր՝ մի նոր նշանակութիւն:

Յարադրաւոր բայերը միմեանցից տարբերուում են իրենց բաղադրիչների բնոյթով, ձեւաբանական կառուցուածքով ու արտայայտած իմաստով: Համապատասխանաբար Ալ. Մարգարեանը դասակարգում է դրանք երեք խմբերում.

1. Յարադիր բայեր, որոնք կազմուում են յարադրից ու բայից եւ գիտակցուում որպէս գործողութեան նշանակութիւն արտայայտող ինքնուրոյն բայական միաւորներ: Սրանք, ձեւաբանական կառուցուածքով յատկանշուելով, կոչուում են յարադրաւոր բայեր:
2. Յարադիր բայեր, որոնք կազմուում են երկու (նաեւ երեք եւ աւելի) անկախ բայերից եւ արտայայտում միմեանց հետ սերտօրէն կապուած գործողութիւններ՝ ընդհանուր նշանակութեամբ: Սրանց անուանում են զուգադրական բայեր:
3. Յարադիր բայեր, որոնք յարադրուում են անորոշ դերբայից եւ տալ բայից՝ արտայայտելով գործողութեան պատճառականութիւն: Ելնելով գործողութեան բնոյ-

թից՝ այդպիսիք կոչուում են պատճառական յարադիր բայեր: Յարադրաւոր բայերի մի խումբ եւս կարող է միանալ տալ բային՝ կազմելով աւելի բարդ կառուցուածք ունեցող պատճառական յարադիր բայ, ինչպէս օրինակ՝ բաց անել տալ (Ալ. Մարգարեան, 1966, 161):

Գերմաներենի հետ զուգադրութեան տեսակէտից մեզ առաւել հետաքրքրական են թերեւս առաջին խմբի, իսկ աւելի յստակ՝ այս խմբի այն յարադիր բայերը, որոնք իրենց ձեւաբանական, կառուցուածքային ու իմաստաբանական բնութագրերով համընկնում են գերմաներէնի ԳՐԿԿ-ների հետ: Խօսքը բայական հիմքով գոյական յարադրից եւ բայից կազմուած յարադիր բայերի մասին է, որոնք հիմնականում կարող են փոխարինուել համապատասխան իմաստով բայով, ինչպէս օրինակ՝ որոշում կայացնել, բանակցութիւն վարել, մուտք գործել եւ այլն:

3. ԳՐԿԿ-ների հակադրումը այլ բայաւորումների համբերում

Համեմատաբար վերջին շրջանի գերմանական լեզուաբանական գրականութեան մէջ տեղ են գտել բաւականին ծաւալուն ուսումնասիրութիւններ ԳՐԿԿ-ների իմաստային եւ շարահիւսական առանձնաչափութիւնների մասին, որոնք կը փորձենք սեփական մօտեցմամբ ամփոփել եւ դասակարգել: Իհարկէ, դասակարգման համար ընտրուած չափանիշները չեն յաւակնում լինել սպառիչ, քանի որ դրանք յօդուածի շրջանակներում այս կառոյցների բնութագրերը յստակեցնելու եւ համակարգուած ներկայացնելու նպատակ են հետապնդում: Վերջիններս հնարաւորութիւն կը տան մեզ սահմանազատելու ԳՐԿԿ-ները շարահիւսօրէն նոյնատիպ այլ կառոյցներից, ինչպէս օրինակ՝ einen Besuch abstaten - այցելութիւն կատարել կամ zur Strecke

bringen - ճիշտ ուղու վրայ դնել դարձուածային արտայայտութիւններն են:

3.1. Իմաստաբանական առանձնաչափութիւններ

Իմաստաբանական յատկանիշների հետեւեալ նկարագրութիւնը յենուում է գործառական բայական կայուն կապակցութիւնների ամբողջական իմաստի վրայ՝ որ ներկայացուում է դրանց կառուցուածքում հանդէս եկող գոյականների, բայերի եւ անգամ նախդիրների (որ հանդիպում են շատ ԳՐԿԿ-ներում) նկարագրութեան միջոցով:

- ԳՐԿԿ-ն լեզուական իմաստակիր մեկ միաւոր է, որում հիմնական իմաստի կրողը բայական հիմքով գոյականն է:
- ԳՐԿԿ-ի կազմում հանդէս եկող գոյականն ունի գործողութեան նշանակութիւն եւ շարահիւսական իմաստաբանութեան տեսանկիւնից հանդէս է գալիս որպէս ստորոգեալ, որը ցոյց է տալիս որեւէ գործողութիւն, գործողութեան ընթացք, իրադարձութիւն կամ իրավիճակ, օրինակ՝ eine Entscheidung treffen (որոշում/վճիռ կայացնել):
- Գործողութեան նշանակութեամբ գոյականը չունի վերաբերելի եւ կազմում է կառոյցի ստորոգական միջուկը: Գոյականի վերաբերութեան բացակայութիւնը կարեւոր տարբերակիչ յատկանիշ է, որը նրան հակադրում է այլ բայ-անուանական կապակցութիւններին, ինչպէս՝ "zu Papier bringen" (թղթին յանձնել) կամ "zur Stelle sein" (տեղում լինել): Սրանցում Papier եւ Stelle գոյականները չունեն բայական կամ ածականական հիմք, այլ միանգամայն կոնկրէտ են եւ ունեն իրենց վերաբերելիները:
- Ի տարբերութիւն գոյականով արտայայտուած գործողութեան, կամ այլ կերպ ասած՝ անուանական գործողութեան, բայը կամ, մեր դէպքում, գործառական բայը գրեթէ ամբողջութեամբ կորցնում է

իր իմաստաբանական բովանդակությունը, հետեւաբար իմաստաբանորէն օտարուում է համապատասխան հիմնական բայից: Աստուածից սակայն չի հետեւում, որ այս բայերը պարզապէս միայն դէմքի, թուի, ժամանակի, եղանակի եւ սեռի քերականական կարգերի ձեւական կրողն են: Դրանք շատ որոշիչ դեր ունեն ԳԲԿԿ-ների ընդհանուր ստորոգման նշանակութեան համար, քանի որ, որպէս շատ ընդհանրական բնոյթի իմաստային յատկանիշների կրողներ, կարող են իմաստաբանորէն տարբերակել գործողութիւնների տարբեր կերպերը, արտայայտելով օրինակ՝ վիճակի, վիճակի փոփոխութեան եւ վիճակի փոփոխութեան ազդեցութեան իմաստներ: Սա եւս կարեւոր չափանիշ է, որ յատուկ է ԳԲԿԿ-ներին եւ բնորոշ է անուանական-բայական այլ կառույցների: Աստուածը կարելի է ցոյց տալ հետեւեալ երկու օրինակի համեմատութեան միջոցով, որոնցից մեկը՝ ԳԲԿԿ, իսկ միւսը դարձուածային արտայայտութիւն է. *zur Einsicht bringen* (խոհեմութեան/ուշքի բերել) ԳԲԿԿ-ն կարող է մեկնաբանուել որպէս «x-ը ներգործում է, որպէսզի y-ը խոհեմ լինի», մինչդեռ *zu Papier bringen* (թղթին յանձնել) արտայայտութիւնը պարզապէս գրել է նշանակում: Դարձուածային արտայայտութեան մէջ *bringen* բայի եւ *Papier* գոյականի միջեւ կապը առնչութիւն չունի որեւէ կերպային յարաբերութեան հետ:

- ԳԲԿԿ-ներում խիստ նուազում է նաեւ նախդիրի իմաստաբանական բովանդակությունը: Նախդիրի կիրառությունը սահմանափակում է միայն հոլովական իմաստի գործառնություն, քանի որ այն վերացական գոյականի հետ կապակցման արդիւնքում կորցնում է իր առաջնային տարածական իմաստը:

3.2. Ծարափիւսական յատկանիշներ

ԳԲԿԿ-ները իմաստաբանական յատկանիշներին զուգահեռ հանդէս են բերում նաեւ շարահիւսական յատկանիշներ:

- ԳԲԿԿ-ները բաղադրեալ ստորոգեալ-արտայայտութիւններ են: Դրանք պարտադիր բաղկացած են գործողութիւն նշանակող գոյականից եւ գործառնութիւն բայից, որոնք գերմաներէնի նախադասութեան կառուցուածքին բնորոշ շրջանակ են կազմում:

- Շատ ԳԲԿԿ-ներում գործողութեան նշանակութեամբ գոյականն ուղեկցում է նախդիրով:

- ԳԲԿԿ-ները հիմնականում կարող են փոխարինուել համապատասխան լիմաստ բայերով:

- Այս կապակցութիւններին ամենաբնորոշ յատկանիշը թերեւս այն է, որ ինչպէս գործառնական բայերը, այնպէս էլ գոյականները կարող են միանգամայն կանխատեսելի հաղորդակցական շարքեր կազմել, ինչպէս օրինակ՝

*in Bewegung bringen* - շարժման մէջ բերել /գործի գցել, աշխատացնել

*In Bewegung kommen* - շարժման գալ /սկսել շարժուել

*in Bewegung sein* - շարժման մէջ լինել

*in Bewegung bleiben* - շարժման մէջ մնալ

*in Bewegung halten* - շարժման մէջ պահել

կամ  
*zur Sprache kommen* խօսքի գալ /սկսել խօսել

*zur Besinnung kommen* խելքի գալ /սկսել մտածել

*zur Aufführung kommen* ներկայացուել /բեմադրուել

*zum Ziel kommen* նպատակին գալ

Դարձուածային միաւորների դէպքում, ինչպէս օրինակ՝ *"zu Papier bringen"* թղթին յանձնել /գրել իմաստով, նման շարքեր կազմել հնարաւոր է:

\**zum Blatt* կամ *zur Schrift bringen* եւ կամ \**zu Papier bleiben* կամ *machen* սխալ արտայայտութիւններ են եւ իմաստ չեն արտայայտում:

- ԳԲԿԿ-ներում խնդրառութեան հիմնական թերադրողը բայական հիմքով գոյականն է, քանի որ գործառնական բայը, զրկուելով իր հիմնական բովանդակութիւնից, կորցնում է նաեւ խնդրառութիւնը:

- Գործողութիւն նշանակող գոյականը հիմնականում հանդէս է գալիս եզակի թուով, չունի վերաբերելի, ուստի հնարաւոր է այն այլ կերպ նշել (անաֆորացնել) կամ նրան հարց ուղղել: Սրանք որպէս կանոն չունեն յօդ, իսկ նախդիրի առկայութեան դէպքում յօդը միաձուլուած է նախդիրի հետ:

- ԳԲԿԿ-ների բայական հիմքով գոյականները՝ ածականական որոշիչով կամ որոշիչ երկրորդական նախադասութեամբ ընդլայնման հնարաւորութիւնները խիստ սահմանափակ են:

- ԳԲԿԿ-ների կազմում հանդէս եկող գոյականները հազուադէպ են ժխտում *"kein"* (ոչ մի) ժխտականով, թէպէտ վերջինս գերմաներէնում առանց յօդի կամ անորոշ յօդով ուղեկցող գոյականների ժխտման հիմնական միջոցն է: ԳԲԿԿ-ները որպէս մեկ ամբողջ, հիմնականում ժխտում են *"nicht"* (չ-) ժխտական ձեւով:

4. Հայերեւի յարադիր բայերի բնորոշ յատկանիշները

4.1. Ձեւաբանական յատկանիշներ

- Հայերէնում յարադրական բայերը հակադրում են համադրական բայերին եւ կազմում վերլուծական բայերի յատուկ խումբ, որոնց բաղադրիչները հանդէս են

գալիս մեկ բառային միաւորի կազմում, սակայն ոչ միաձույլ, այլ իրարից անջատ:

- Յարադրաւոր բայերը՝ որպէս մեկ բառաձեւ, ունեն մեկ ընդհանուր բառաչեղտ, որի մասին առաջինը խօսել է Մ. Աբեղեանը. «... յարադրեալ բայերի մէջ, որոնք կազմում են մի բառական միութիւն, շեշտում է միշտ նախադաս յարադիրը, ինչպէս՝ ցոյց տալ, մա՛ն գալ եւ այլն» (Մ. Աբեղեան, 1933: 20):

- Յարադիրները, որոնք բայերի հետ իրենց անջատ միասնութեամբ յարադրական բայեր են կազմում, չեն պահպանում իրենց խօսքիմասային յատկանիշները:

- Յարադրական բայերի յարադիրները չեն ենթարկուում իմաստային սահմանափակումների, ինչպէս՝ երեւան գալ, ճանապարհ ընկնել, դուրս թռչել, հրածեղ տալ, վրայ հասնել, դէմ առնել, թափ հալաքել, ձեռք քաշել, փուլ գալ, մաս-մաս անել, թողնել գնալ, կարճ կապել եւ այլն:

- Յարադրական բայերի առաջին բաղադրիչ յարադիրը գործածում է առանց թեքուելու, անփոփոխ, մինչդեռ դրանք որպէս ինքնուրոյն բառեր, կարող են իրենց յատուկ քերականական-ձեւաբանական կարգերով փոփոխուել:

- Գոյականով արտայայտուած առանձին յարադիրներ, սակայն, ի սկզբանէ հոլովուած են միանում բային՝ կազմելով յարադրաւոր բայ, ինչպէս՝ լեզուին տալ, կարմրին տալ, ձեռքից գնալ, աչքով անել եւ այլն:

- Հայերէնում որպէս յարադրաւոր բայական բարդութիւններ են դիտարկում նաեւ զուգադրական բայերը, ինչպէս՝ անցնել-գնալ, գալ-հասնել, պառկել-քնել, կտրել-հանել, ընկնել-մեռնել, գնալ-գալ, առնել-ծախել, ուտել-խմել, սարքել-պրծնել եւ այլն/:

- Կրաւորական սեռի յարադրաւոր բայերը կազմում են հիմնականում լինել

բայով, ինչպէս նաեւ -վ- բայածանցի միջոցով:

• Յարադիր բայերը բնորոշուում են բային յատուկ բոլոր քերականական կարգերով:

4.2. Շարահիւսական յատկանիշներ

• Շարահիւսական շղթայում բայ-անունական կապակցութիւնների առաջին բաղադրիչի ձեւաբանական փոփոխութիւնների ենթարկուելու հանգամանքը փաստում է նրա ոչ յարադիր բայ լինելու մասին: Օրինակ՝

Ձայն տուր, որ գայ:

/յարադիր բայ/

Ձայնդ տուր այս թեկածուին:

/ոչ յարադիր բայ/

• Առանձին յարադիրներ կարող են հանդէս գալ միայն յարադրաւոր բայի կազմում, ինչպէս՝ կուչ գալ/ածել, թաւալ գալ, թիկն տալ, ման գալ/ածել/տալ, կանգ առնել, կոտր ընկնել եւ այլն:

• Հայերէնում յարադրաւոր բայերը մտնում են բարդ բառերի խմբի մէջ, սակայն տարբերում են այլ տեսակի բարդ բառերից: Նրանց միաւորների միջեւ կապերը շատ նման են դարձուածային արտայայտութիւնների միաւորների միջեւ գործող կապերին, ինչը յաճախ հնարաւորութիւն է չի տալիս սահմանազատելու դրանք սովորական շարահիւսական կապակցութիւններից կամ առանձին դարձուածներից: Համեմատենք՝ ձայն տալ – ձայնը տալ, ձեռք մեկնել – ձեռքը մեկնել, ձեռք քաշել – ձեռքը քաշել, գլուխ դնել – գլուխը դնել եւ այլն: Նշուած գոյգերում առաջինները յարադրաւոր բայեր են, քանի որ բնորոշուում են վերը շարադրուած ձեւաբանական առանձնայատկութիւններով, իսկ երկրորդները՝ շարահիւսական կապակցութիւններ, որոնցում կապակցութեան իւրաքանչիւր միաւոր հանդէս է գալիս իր բուն նշանակութեամբ:

• Առանձին յարադրաւոր բայեր յաճախ դժուար է տարբերել դարձուածային միաւորներից, ինչպէս՝ քիթը ցցել, հոգին դուրս գալ, կարօտը առնել, սիրտը շահել եւ այլն: Որպէս դարձուածային արտայայտութիւններ՝ նրանց միաւորների միջեւ շարահիւսական կապն աւելի ակնառու է, դրանցից իւրաքանչիւրը կարող է ինքնուրոյն քերականական ձեւեր ընդունել եւ նախադասութեան մէջ ազատ տեղաշարժուել:

• Յարադրաւոր բայերը կարող են հանդէս գալ դարձուածային միաւորի կազմում, ինչպէս՝ քիթը կախ անել, սիրտը բաց անել, բերանը շաղ տալ, քիթը վեր ցցել, ճրագով ման գալ, գլուխը քոր գալ եւ այլն:

4.3. Իմաստաբանական յատկանիշներ

• Ի տարբերութիւն յարադիրների՝ յարադրական բայական բարդութիւն կարող են կազմել միայն սահմանափակ թուով բայեր, որոնք իմաստով վերացարկուելու եւ յարադրուելու յատկութիւն ունեն: Ըստ Ալ. Մարգարեանի՝ հայերէնում այդ բայերը մօտաւորապէս 450-ն են, սակայն իրենց արտադրողականութեամբ առանձնանում են անել, ընկնել, լինել, գալ, տալ, բերել, գցել, դառնալ, դնել, առնել, բայերը:

• Յարադրուելու մեծ ներուժով են օժտուած շարժում, տեղափոխութիւն, կամ դինամիկ գործողութիւն արտայայտող բայերը, ինչպէս՝ թռչել, մտնել, վազել, թափել, ցատկել, փախչել, քշել, քաշել եւ այլն:

• Որոշ նշանակութիւններ հնարաւոր է արտայայտել միայն յարադրաւոր բայերով, ինչպէս՝ դուր գալ, ցոյց տալ, առել-տուր անել, հրաժեշտ տալ եւ այլն:

• Հայերէնի յարադրաւոր բայի բաղադրիչները հաւասար դեր են կատարում բարդութեան մէջ, հետեւաբար նրանց միջեւ կապերն ու յարաբերութիւնները հաւասարապէս պայմանաւորուած են երկու

բաղադրիչներով. մի դէպքում «յարադիրն է որոշում բայի բովանդակութիւնը՝ ինչ անելը կամ լինելը», մի դէպքում էլ «բայը պահում է իր նշանակութիւնը, եւ յարադիր մասը... զօրացնում կամ պարզում է բայի նշանակութիւնը» (Մ. Աբեղեան, 1931: 171), առանձին դէպքերում էլ դրանք միասնաբար բոլորովին նոր նշանակութիւն են արտայայտում:

• Յարադրաւոր բայ կազմելու յատկութիւն ունեցող բայերը իրենց սեռային նշանակութիւնները մեխանիկորէն չեն փոխանցում յարադրաւոր բային: Բառային միութիւն կազմելով՝ դրանք ձեռք են բերում ինչպէս իմաստային, այնպէս էլ սեռային նոր արժէք, ինչպէս օրինակ՝ անել, առնել, դնել, տալ պարզ բայերը ներգործական սեռի են, մինչդեռ սիրտ անել, դէմ առնել, գլուխ դնել, ձեռք տալ յարադրաւոր բայերը չէզոք սեռի են:

5. ԳՐԿԿ-ՆԵՐԻ ԱՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՈՂՈՐՈՒՄՆԵՐ

Գրկկ-ների վերը շարադրուած բնութագրիչները առանձին ոլորտներին յատուկ օրինակների միջոցով ներկայացումը հնարաւորութիւն կը տայ հաստատելու բայանունական այս խմբի կառոյցների լեզուաբանական նշանակութիւնը: Հայերէնի յարադրաւոր բայերի դէպքում նոյն պնդումները կատարելու կամ դրանք ժխտելու նպատակով՝ գուգահեռաբար կը ներկայացնենք դրանց հայերէն թարգմանութիւնները:

5.1. ՈՃԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ե՛ւ գերմաներէնի ԳՐԿԿ-ների ե՛ւ հայերէնի յարադրաւոր բայերի առաջնային գործառնոյթներից մեկը ոճական խնդիրների լուծումն է: Ոճով պայմանաւորուած յաճախ տեքստերում առանձին բառեր, արտայայտութիւններ ու կառոյցներ փոխարինում են համապատասխան համար-

ժէքներով (G. Starke 1975: 158): Այս երեւոյթը առաւելապէս կիրարկուում է այն տեքստերում, որոնցում առանձին իրողութիւններ կամ գործընթացներ յարաբերականօրէն յաճախ (միջինից բարձր) են հանդիպում: Օրինակ, հետեւեալ բարդ ստորադասական նախադասութեան պայմանի երկրորդական՝ եւ դրան յաջորդող հետեւանքի նախադասութեան ստորոգեալները բովանդակութեամբ կրկնուում են.

Ist eine in ausländischer Währung ausgedrückte Geldschuld im Inlande zu zahlen, so kann die Zahlung in Reichswährung erfolgen.

Եթէ արտարժոյթով արտայայտուած դրամական պարտքը երկրում է վճարուելու, ապա վճարումը կարող է կատարուել այդ երկրի արժոյթով:

Տուեալ դէպքում պարզ բայի՝ յաջորդ նախադասութեան մէջ Գրկկ-ով փոխարինումը պազապէս ոճական նշանակութիւն ունի. տեղի է ունենում մի արտայայտութեան փոխարինում մեկ այլ արտայայտութեամբ՝ բառացի կրկնութիւնից, խուսափելու նպատակով: (Օրինակը թարգմանուած է Գերմանիայի Դաշնային Հանրապետութեան օրէնսգրքից՝ բնագրին հնարաւորինս մօտ:)

ԳՐԿԿ-ների, առաւել եւս յարադրաւոր բայերի ոճական նշանակութիւնը ոչ մի դէպքում չի կարելի թերարժեւորել, քանի որ դրանք իրենց համադրման հնարաւորութիւնների շնորհիւ օգնում են «ոճական բազմազան շերտերի եւ երանգների տարբերակմանը» (G. Starke 1975: 159), հետեւաբար շատ կարեւոր են տարբեր տեսակի տեքստերի ոճական առանձնայատկութիւնների ընդգծման տեսակէտից:

5.2. ԻՄԱՍՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԿԿ-ները կարեւոր դերակատարութիւն ունեն նաեւ իմաստաբանութեան տե-

սանկիւնից: Ինչպէս ցոյց է տալիս պարզ բայերի եւ անուանական նկարագրական ձեւերի (պարաֆրազների) համեմատութիւնը, վերջիններս ի վիճակի են լրացնելու գերմաներէնի բայական համակարգի թերութիւններն ու բացերը (Daniels 1963: 32; Persson 1981: 28; Günther 1976: 120):

Թէպէտ ԳԲԿԿ-ները բայ-անուանական այլ կապակցութիւններից տարբերակող ամենակարեւոր յատկութիւններից մեկն էլ այն է, որ այս կապակցութիւնները կարող են քերականորէն փոխարինուել համարժէք բայով, օրինակները ցոյց են տալիս, որ դրանք շատ յաճախ գործածուում են հէնց այն դէպքերում, երբ համապատասխան բայերը, այնուամենայնիւ, չեն արտայայտում բոլոր այն իմաստային յատկանիշները, որոնք հանդէս են բերում ԳԲԿԿ-ները:

in Betrieb nehmen - շահագործման յանձնել/սկսել շահագործել (\*betreiben - զբաղուել, վարել, շահագործել, աշխատեցնել)

zur Sprache bringen - խօսք բացել, քննարկման դնել, (\*sprechen - խօսել)

in Rechnung stellen - հաշուի առնել, ուշադրութիւն դարձնել (\*rechnen - հաշուարկել)

Այս ԳԲԿԿ-ների ոչ միայն բայերը, այլեւ բայահիմքով գոյականները կորցրել են իրենց հիմնական իմաստները եւ հանդէս են գալիս այլ, միանգամայն նոր իմաստային յատկանիշներով: Հետեւաբար ԳԲԿԿ-ները գերմաներէնում անկախ եւ անփոխարինելի միաւորներ են եւ այստեղ չի կարելի խօսել բայի մասնատման, (Von Polenz 1963) կամ բայի ձգած ձեւի (Schmidt 1968; Tüchel 1982: 5) մասին, ինչպէս որ դա մինչեւ վերջին ժամանակներս լեզուաբանադատների կողմից էր արւում: Արդիւնքում վերլուծական բառակազմութեան մեթոդով լեզուում ստեղծուել են անուանական-բայական կառոյցներ, որոնք նոր, հէնց իրենց բնորոշ իմաստով ի վիճակի են փակելու այսպէս կոչուած «քերականական համակարգի բացը» (von Polenz 1963b: 200)

ԳԲԿԿ-ները բացի նոր տիպի ստորոգեալ ստեղծելուց, հանդէս են բերում եւս մեկ նշանակութիւն. խօսքը նախադասութեան ներկառուցուածքային փոքր փոփոխութեան միջոցով ստորոգեալի իմաստափոխութեան մասին է: ԳԲԿԿ-ները, ի տարբերութիւն մաքուր բայական ստորոգեալի, կատարում են կերպային տարբեր իմաստների ընդգծման գործառոյթ՝ ազդարարելով գործընթացի սկզբնական փուլ, աւարտման փուլ, յանկարծակի սկիզբ, գործընթացի դանդաղ, աստիճանական սկիզբ, չնախատեսուած գործողութեան սկիզբ ու շարունակութիւն եւ այլն: (I. Starke 1989: 80):

Գործառական բայերը, գլխաւորապէս կորցնելով իրենց բնորոշ հիմնական իմաստային յատկանիշները, ձեռք են բերում առաւել ընդհանրական իմաստային յատկանիշներ, ինչպէս օրինակ՝ պատճառականութեան, գործողութեան սկզբի կամ շարունակականութեան իմաստներ, ինչը նրանց միանգամայն նոր որակ է հաղորդում: Հէնց այս նոր որակն է, որ գործառական բայերին թոյլ է տալիս ազատորէն համադրուել գործողութեան նշանակութեամբ գոյականների հետ եւ որպէս ստորոգեալ կերպային իմաստներ տարբերակել: Ասուածը կարելի է ցոյց տալ հետեւեալ օրինակի միջոցով.

Der Frieden brachte alles in Ordnung.  
Խաղաղութիւնը ամէն ինչ կարգի բերեց:  
Այս նախադասութեան մէջ ԳԲԿԿ-ստորոգեալը (P), որը վիճակ է արտայայտում, կազմած է Ordnung գործողութեան նշանակութեամբ գոյականից եւ bringen գործառական բայից, որը ազդել պատճառական ստորոգում է նշում:

Ուստի նախադասութեան ամբողջական կառուցուածքը հետեւեալ տեսքն ու-

նի. «x-ը ազդում է, որպէսզի y-ը կատարի P-ն կամ որպէսզի P վիճակը լինի:» (von Polenz 1987: 173) Գերմաներէնում պատճառական իմաստով ԳԲԿԿ-ներ ձեւաւորելու եւ այդպիսով բայական բառակազմութեան առանձին բացերը լրացնելու համար արդիւնաւէտորէն կիրառուում են bringen - բերել, setzen - դնել, versetzen - անել, stellen - դնել, geben - տալ, ziehen - քաշել գործառական բայերը: Երբ լեզուում պարզապէս անհրաժեշտ նշանակութեամբ համապատասխան բայ չկայ, լեզուն դիմում է ԳԲԿԿ-ներին կամ այլ նկարագրական ձեւերի: Օրինակ՝ zum Stillstand bringen - դադարի վիճակի բերել ԳԲԿԿ-ի փոխարէն կարող էր գործածուել veranlassen, dass etwas stillsteht - այնպէս անել, որ ինչ-որ բան դադարի վիճակի գայ նկարագրութիւնը կամ in Bewegung setzen - շարժման մէջ դնել/գործի պցելու փոխարէն so machen, dass sich etwas bewegt - այնպէս անել, որ ինչ-որ բան շարժուի/աշխատի նկարագրական ձեւը: Իհարկէ ակնյայտ է, որ ներկայացուած նկարագրական ձեւերը զգալիորէն կը ծանրացնեն խօսքը:

Բացի պատճառականութիւնից՝ ԳԲԿԿ-ները կարող են նաեւ գործողութեան սկիզբ կամ աւարտ ցոյց տալ: Խօսքը ԳԲԿԿ-ներով արտայայտուող իրավիճակային կերպի մասին է: Դրանք ձեւաւորուում են, երբ «x-ը ազդում է, որպէսզի ... » պատճառական բաղադրիչը հանուում է, եւ արդիւնքում մնում է հետեւեալ հիմնական կառուցուածքը. «այնպէս է ստացուում, որ y-ը լինում է»: Այսպիսի ԳԲԿԿ-ներ են, օրինակ, in Bedrängnis kommen - նեղն ընկնել, in Vergessenheit geraten - մոռացութեան մատնուել, zu Ansehen gelangen - հեղինակութիւն ձեռք բերել, in Druck gehen - տպագրութեան գնալ oder in Erscheinung treten - երեւան գալ/յայտնուել: Ինչպէս նկատեցինք այս խմբի ԳԲԿԿ-ները կազմում են kommen, geraten, gelangen, gehen, treten /

գալ, ինչ-որ տեղում յայտնուել, հասնել, գնալ, մտնել գործառական բայերով:  
Ի վերջոյ, եթէ ինկուատիւ ԳԲԿԿ-ներից իրադրային կերպի (Aktion) իմաստը հանուել, կը մնայ միայն ստորոգեալի շարունակականութեան իմաստը, որն արդէն իսկ արտայայտուած է բայական հիմքով գոյականի իմաստում: Sein - լինել, sich befinden - գտնուել, bleiben - մնալ, stehen - դրուած/կանգնած լինել, haben - ունենալ կամ liegen - դրուած/պառկած լինել գործառական բայերը ԳԲԿԿ-ներին իրենց հիմնական իմաստից բխող յաւելեալ իմաստ չեն հաղորդում, ուստի հանդէս են գալիս որպէս հակադրութիւն համապատասխան պատճառական կամ ինկուատիւ ԳԲԿԿ-ներին՝ տեւականութեան իրադրային կերպային իմաստն աւելի ընդգծելու գործառոյթով.  
in Abhängigkeit bringen - կախման մէջ պցել (պատճառական)  
in Abhängigkeit geraten - կախման մէջ ընկնել (ինկուատիւ)  
in Abhängigkeit sein - կախման մէջ լինել (շարունակական)

Ի տարբերութիւն միւս երկու դասերի վերջիններս կարող են առանց իմաստային կորուստների փոխարինուել հոմանիշ բայով կամ ածականով: Այս պնդման համաձայն՝ abhängig sein - կախուած լինել եւ sich bewegen - շարժուել արտայայտութիւնները հոմանիշ են in Abhängigkeit sein եւ in Bewegung sein ԳԲԿԿ-ներին: I. Starke-ն (1989: 85) խօսում է ստատիկ բնոյթ ունեցող գործառական բայերով կազմուած շարունակական իմաստ ունեցող ԳԲԿԿ-ների մասին, որոնք կարող են կապակցուել ինչպէս վիճակ նշանակող, օրինակ՝ im Besitz haben - (ունեցուածքում) ունենալ, այնպէս էլ ընթացք արտայայտող գոյականների հետ, ինչպէս օրինակ՝ im Sterben liegen - մահճում պառկած լինել:

Եթէ դիտարկենք ԳՐԿԿ-ների պատճառականութիւնը, սկիզբ եւ շարունակականութիւն նշանակող տարբեր իրացումները, պարզ կը դառնայ, որ չնայած դրանց նոյնական շարահիւսական կառուցուածքներին՝ որոշ ԳՐԿԿ-ներ ակտիւ/ներգործական, իսկ միւսները՝ պասիւ/կրաւորական նշանակութիւն կարող են ունենալ: Օրինակ. *in Verlegenheit bringen* – անյարմար վիճակի մէջ գցել / շփոթեցնել ԳՐԿԿ-ից ենթադրուում է, որ X-ը բերում է Y-ին շփոթութեան = X-ը ազդում է, որ Y-ը շփոթուած լինի, իսկ *zur Abstimmung bringen* – Համաձայնեցնել / Համաձայնութեան բերել ԳՐԿԿ-ից Հետեւում է, որ X-ը բերում է Y-ին Համաձայնութեան = X-ը ազդում է, որ Y-ի միջոցով Համաձայնեցում կատարուի:

Եթէ բոլոր ԳՐԿԿ-ներն այնպէս կառուցուած լինէին, որ գործառական բայը միշտ նոյն իրադրային կերպն արտայայտէր, եւ կառոյցը, որպէս ամբողջութիւն, հնարաւոր լինէր ակտիւ կամ պասիւ ներկայացնել, ապա այս թեման այլեւս կը կորցնէր իր հետաքրքրականութիւնն ու այսպիսի քննարկման կարիք այլեւս չէր լինի: Այնուամենայնիւ, գոյութիւն ունի ԳՐԿԿ-ների մի տեսակ, որը չի արտայայտում ոչ պատճառականութիւն, ոչ սկիզբ եւ ոչ էլ շարունակականութիւն: Այս ԳՐԿԿ-ները միայն կրաւորականութիւն են արտայայտում, օրինակ՝ *Anerkennung finden* – ճանաչում գտնել կամ *eine Veränderung erfahren* – փոփոխութիւն կրել: Հետաքրքրական է, որ *finden* – գտնել եւ *erfahren* – իմանալ/ճանաչել/տեղեկանալ բայերը՝ որպէս ինքնուրոյն բայեր, ներգործական սեռի են. ակտիւ գործողութեան իմաստ են արտայայտում (*ich finde meinen Schlüssel* – ես գտնում եմ իմ բանալին եւ *ich erfahre eine Neuigkeit* – ես մի նորութիւն եմ իմանում/ստանում): Եթէ ինչ-որ մեկը ճանաչում է գտնում, ճանաչման ակտը ոչ թէ նրանից է բխում, այլ տարածուում/ազդում է նրա վրայ: «Հետեւաբար,

գործ ունենք գործընթացի կրաւորական ուղղութեան հետ» (Kolb 1966: 174): ԳՐԿԿ-ի եւ սովորական կրաւորական արտայայտութեան միջեւ տարբերութիւնը միայն կառուցուածքի երկրորդ մասում է: Սովորական կրաւորական կառոյցում գործընթացը արտայայտում է յարակատար դերբայով, մինչդեռ գործառական բայը պահանջում է գործողութիւն-գոյական: Այս յատկանիշի շնորհիւ է, որ կրաւորական ԳՐԿԿ-ները ամենից յաճախ կիրառութիւն են գտնում ակադեմիական տեքստերում: Այդ տեքստերում օբյեկտը յաճախ ներգործութեան է ենթարկուում, եւ դրանցում անխուսափելի են տարբեր երեւոյթների, հասկացութիւնների ձեւաւորում-ձեւակերպումները, այսինքն՝ դրանց անուանականացումը: Վերջինս թերեւս մասնագիտական լեզուի կարեւորագոյն առանձնայատկութիւններից է: Հետեւաբար ԳՐԿԿ-ների իմաստային վերլուծութեան ընթացքում, գործողութեան իրադրային կերպի տարբերակման գործառոյթից բացի, հարկ է այս կառոյցներին ուշադրութիւն դարձնել նաեւ որպէս կրաւորական արտայայտութիւնների այլընտրանքի կամ փոխարինողի:

ԳՐԿԿ-ների եւս մի կարեւոր իմաստաբանական գործառոյթ, որ չի կարելի անտեսել: Դա «բայի բովանդակազրկման» միջոցով նրա գործառութային դաշտի ընդլայնումն է (Stötzel 1965: 23): Ինչպէս օրինակ՝ *bringen* – բերել, *kommen* – գալ, *finden* – գտնել, *tun* – անել, *geben* – տալ եւ այլ բայերը՝ որպէս գործառութային բայեր, ի վիճակի են կապակցուել շատ աւելի մեծ թուով գոյականների հետ, քան որպէս ինքնուրոյն բայեր, քանի որ վերջիններս կոնկրետ իմաստ ու պարտադիր խնդրառութիւն ունեն եւ դրանով պայմանաւորուած որոշակի սահմանափակումների են ենթարկուում:

Այս ազատ կապակցելիութիւնը, որը հարկ է խօսքում որպէս լեզուի տնտեսման գործընթաց ընկալել (տե՛ս Günther / Pape 1976; Dyhr 1981), ոչ միայն իմաստաբանութեան ոլորտի վրայ է անդրադառնում, այլեւ շարահիւսութեան, քանի որ այն ներգործութիւն է ունենում գործառական բայի խնդրառութեան եւ ընդհանրապէս ամբողջ ԳՐԿԿ-ի վրայ: Հայ լեզուաբանութեան մէջ յարադրաւոր բայերի գործառոյթների նկարագրութիւններում յատուկ շեշտադրումներ չկան դրանց կերպային իմաստների վրայ, ինչպէս նաեւ տեղ չեն գտել «բայի գործառութային դաշտի ընդլայնման» կամ «լեզուի տնտեսման» մասին դրոյթները, հաւանաբար այն պատճառով, որ դրանք չեն ուսումնասիրուել նշուած տեսակէտներով: Եւ քանի որ յարադրաւոր բայերի հիմնական հետազոտութիւնները Համեմատաբար վաղ են իրականացուել, երբ, օրինակ, լեզուի տնտեսման մասին դեռեւս չէր խօսուում կամ, աւելի ճիշտ, չկային այդպիսի տեսութիւններ, պարզապէս սխալ կը լինի պնդել, որ հայերէնում յարադրաւոր բայերը չունեն այս գործառոյթները:

5.3. Ծարափախութիւն

Շարահիւսական յատկութիւնների նկարագրութեան մէջ արդէն ասուել է, որ ԳՐԿԿ-ի խնդրառութեան հիմնական կողմը գոյականի հիմքում ընկած բայն է: Սա, իհարկէ, ճիշտ է իմաստային արժոյթայնութեան տեսանկիւնից, յատկապէս, եթէ համատեղ բխում է գործողութիւն-գոյականից: Ինչ վերաբերում է, սակայն, շարահիւսական կառուցուածքին, պէտք է հաշուի առնել, որ նախադասութեան շարահասութեան դիրքային պլանը, այնուամենայնիւ, գործառական բայով է կանխորոշուում (Abramov 1978: 3; Sommerfeldt 1980): Նախադասութեան կազմում կարող են հանդէս գալ միայն այն լրացումները, որոնք թոյլ է տալիս տուեալ բայի խնդրառութիւնը: Այստեղ սակայն, շարահիւսական դատարկ դիրքերի կարգավիճակով (պարտադիր կամ ֆակուլտատիւ) պայմանաւորուած, կարող են տարբերութիւններ լինել: Բանն այն է, որ շարահիւսական բացերից մեկն արդէն իսկ զբաղեցնում է գործողութիւն-գոյականը, որին, սակայն իմաստաբանական մակարդակում ոչ մի իրողութիւն չի համապատասխանում: Արդիւնքում, շարահիւսական մակարդակի մակերեսային կառոյցի եւ իմաստաբանական խորքային կառոյցների միջեւ յարաբերութեան համապատասխանութեան խզում է առաջանում (Lehmann 1983): Ասուածը կարելի է հետեւեալ օրինակով ցոյց տալ.

Das Thema steht zur Diskussion. – Թեման քննարկման է դրուած:

Այս նախադասութեան մէջ *das Thema*-ն շարահիւսական ենթական է կամ ուղղական հոլովով լրացումը, իսկ իմաստաբանորէն՝ գործողութեան կողմը (*Partiens*): Փոխարէնը *zur Diskussion* – քննարկման համար նախդրաւոր արտայայտութիւնը զբաղեցնում է պարտադիր դիրք (նախադասութիւնն առանց այս լրացման քերականորէն սխալ կը լինի), սակայն գործող անձ (*Agens*), ներգործող առարկայ (*Patiens*), հասցէատէր (*Adressat*) կամ այլ տեսակի իմաստային յարաբերութիւններ չի արտայայտում:

Այս փաստը մի կողմից հնարաւորութիւն է տալիս ԳՐԿԿ-ին կրճատելու իմաստաբանական այլ իրողութիւնները եւ այդպիսով աւելի յստակեցնելու տուեալ իմաստը, միւս կողմից, փոխելով շարահիւսական արժոյթայնութիւնը եւ տեղափոխելով կարեւոր լրացումները, օրինակ՝ ենթակայի դիրքը, հնարաւորութիւն է տալիս առանձնայատուկ ընդգծել դրանք:

Man muss das Thema diskutieren. – Պէտք է թեման քննարկել:

Das Thema steht zur Diskussion. — Թեման դրուած է քննարկման:

Առաջին ասոյթը համապատասխան ԳԲԿԿ-ով կազմուած անդէմ կառոյցով փոխարինելով՝ խօսողը կարեւորում է գործընթացը ու միաժամանակ լեզուի խնայողութիւն կատարում: «անանձնականացման» (Yuan 1982: 8) միջոցով օբյեկտը, խնդրի գործառոյթից ենթակայի դերը ստանձնելով, իրողութիւնը կամ գործընթացը առաջին պլան են մղում: Ընդ որում բայի կողմից զբաղեցուող դիրքերը մեկով կրճատուում է, ինչը որոշիչ նշանակութիւն ունի այն տեքստերի համար, որոնց կարեւորագոյն բնութագրիչներէն են հասկացութիւնների ընդգծումը եւ դրանց առարկայական բնոյթ հաղորդելը, այսինքն՝ լեզուական օբյեկտիւացումը:

Նշուած գործառոյթներին հարկ է աւելացնել նաեւ առկայական տրոհման գործառոյթը. «ԳԲԿԿ-ի գոյականը (որն ի դէպ նախադասութեան բովանդակային միջուկն է), հանդէս գալով նախադասութեան վերջին դիրքում եւ ունենալով ընդգծուած հնչերանգ, վեր է հանում նախադասութեան բովանդակային միջուկը» (Daniels 1963: 93): Թեմա-ռեմայ կառուցուածքային կաղապարից յայտնի է, որ նախադասութեան կարեւոր տեղեկութիւն պարունակող անդամները կամ այն անդամները, որոնք բանախօսը կարեւոր է համարում եւ ուզում է առանձնակի շեշտադրել, ձգտում են հնարաւորինս դէպի աջ, այսինքն՝ նախադասութեան վերջ: ԳԲԿԿ-ի կառուցուածքի շնորհիւ, որը բաժանուող նախածանցով բայ է յիշեցնում, խօսողին յաջողում է շեշտը դնել ռեմայի վրայ՝ առանց ընդունուած շարադասութեան խախտման կամ նախադասութեան անդամների վերադասաւորման:

Morgen bringt er endlich im Betriebsrat seine Besorgnisse zum Ausdruck.

\*Վաղը կը բերի նա վերջապէս խորհրդում իր մտահոգութիւնները արտայայտութեան:

(Վաղը խորհրդում նա վերջապէս կ'արտայայտի իր մտահոգութիւնները:)

Օրինակում կարելի է տեսնել, որ ԳԲԿԿ-ի գործառական բայի եւ գոյականի միջեւ կարող են տարբեր լրացումներ տեղակայուել: Գլխաւոր շեշտը ընկնում է գործողութեան նշանակութեամբ գոյականի վրայ, որը, ըստ գերմաներենի շարադասութեան կանոնների, միշտ գտնուում է գլխաւոր նախադասութեան վերջում եւ համապատասխանաբար՝ երկրորդական նախադասութեան վերջին դիրքը զբաղեցնող խոնարհուած բայից անմիջապէս առաջ:

Այս վերջին գործառոյթը հայերէնի յարադրաւոր բայերի բնութագրիչների ցանկում թերեւս տեղ չի գտել հաւանաբար այն պատճառով, որ հայերէնի նախադասութիւնը յարաբերաբար ազատ շարադասութիւն ունի, եւ անդամների դիրքերի տեղաշարժը բաւական ճկուն է իրականացում: Գուցէ սա է նաեւ պատճառը, որ հայերենագիտութեան մէջ պատշաճ ուշադրութիւն չի դարձուել նախադասութեան առկայական տրոհման վերաբերեալ ուսումնասիրութիւններին:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յօդուածում ներկայացուած փաստերը ցոյց են տալիս, որ ԳԲԿԿ-ները գերմաներէնի լեզուական համակարգում անկասկած աւելին են, քան պարզապէս հիմնական բայի ոճական տարբերակ լինելը եւ որպէս այդպիսին՝ հանդէս են բերում, իրենց բնորոշ իմաստաբանական, բառակազմական եւ շարահիւսութեան յատկանիշներ: Ու չնայած ԳԲԿԿ-ների եւ հայերէնի յարադրաւոր բայերի մի առանձին խմբի լիակատար համապատասխանութեանը (ինչպէս կառուցուածքի, այնպէս էլ իմաստային յատկանիշների առումով)

հայերենագիտութեան մէջ վերջիններս դիտարկուած են բառակազմութեան տեսանկիւնից եւ բնորոշում են որպէս բարդ վերլուծական բայեր: Հետեւաբար, ի տարբերութիւն ԳԲԿԿ-ների, հայերէնի յարադրաւոր բայերը ընկալուած են որպէս մեկ բառային միաւոր ու բնութագրուած են հէնց այդ տեսանկիւնից: Հայերենագիտութեան մէջ բայի համադրումը ցանկացած խօսքի մասի հետ, որտեղ առաջին բաղադրիչը շարահիւսական շղթայում չի թեքուում, դիտարկուած է որպէս յարադրաւոր բայ: Գերմաներէնում, ինչպէս տեսանք, ԳԲԿԿ-ի ըմբռնումը շատ աւելի նեղ է, սակայն վերջինիս աւելի շատ գործառոյթներ են վերագրուած, քան հայերէնի յարադրաւոր բայերին:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ալ. Մարգարյան, Հայերէնի հարադրաւոր բայերը, Երևան, 1966, էջ 22:  
Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1950, էջ 143-153:  
Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 172:  
Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933, էջ 20:  
Հ. Ա. Այտրնեան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, 1987, էջ 319:  
Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, 1951, էջ 287:  
Լ. Հախվերդյան, Ջրույցներ լեզվի մասին, Սովետական գրող, 1986  
Abramov, B. 1978. "Über einige Regularitäten in den Valenzeigenschaften der verbalen Streckformen vom Bautyp "präpositionale nominale Komponente + verbale Komponente (in Bewegung sein, kommen, bringen)."Valence, semantic case and grammatical relations. Hg. W. Abraham. Amsterdam:1-8.  
Daniels, Karl-Heinz. 1963. Substantivie-

rungstendenzen in der deutschen Gegenwartssprache. Nominaler Ausbau des verbalen Denkkreises. Düsseldorf: Pädagogischer Verlag Schwann.

Dyhr, Mogens. 1980. "Zur Beschreibung von Funktionsverbgefügen". Kopenhagener Beiträge zur Germanistischen Linguistik. Sonderband 1. Festschrift für Gunnar Bech: 105-122.

Engelen, Bernhard. 1968. "Zum System der Funktionsverbgefüge". Wirkendes Wort 18: 289-303.

Götze, Lutz. 1973. "Funktionsverbgefüge im Deutschunterricht für Ausländer". Zielsprache Deutsch 2: 54-61.

Günther, Heide, und Sabine Pape. 1976. "Funktionsverbgefüge als Problem der Beschreibung komplexer Verben in der Valenztheorie". Untersuchungen zur Verbalenz. Hg. Helmut Schuhmacher. Tübingen: Institut für deutsche Sprache: 92-128.

Heringer, Hans-Jürgen. 1968. Die Opposition von "kommen" und "bringen" als Funktionsverben. Untersuchungen zur grammatischen Wertigkeit und Aktionsart. Düsseldorf: Pädagogischer Verlag Schwann.

Kolb, Herbert. 1966. "Das verkleidete Passiv. Über Passivumschreibungen im modernen Deutsch". Sprache im technischen Zeitalter 19: 173-198.

Kolb, Herbert. 1962. "Sprache des Veranlassens. Über analytische Kausativbildungen im modernen Deutsch". Sprache im technischen Zeitalter 5: 372-387.

Lehmann, Sieghardt. 1983. "Zu einigen Problemen bei der Beschreibung von FVG". Zielsprache Deutsch 4: 42-46.

Persson, Ingemar. 1981. "Das Funktionsverbgefüge mit dem Funktionsverb 'finden' – Eine semantisch-syntaktische Analyse". Deutsch als Fremdsprache 1: 25-32.

Schmidt, Veronika. 1968. Die Streckformen des deutschen Verbuns. Substantivisch-

verbale Wortverbindungen in publizistischen Texten der Jahre 1948 bis 1967. Halle: VEB Max Niemeyer Verlag.

**Sommerfeldt, Karl-Ernst.** 1980. "Zur Valenz von Funktionsverbgefügen". Deutsch als Fremdsprache 17: 294-297.

**Starke, Günter.** 1975. "Zum Einfluß von Funktionsverbgefügen auf den Satzbau im Deutschen". Deutsch als Fremdsprache 3: 157-163.

**Starke, Ingrid.** 1989. "Untersuchungen zur syntaktisch-semantischen Leistung von Funktionsverbgefügen im Deutschen (als Grundlage für eine automatische Analyse)". Studia grammatica XXX: 78-114.

**Stötzel, Georg.** 1965. "Schwierigkeiten bei der sprachwissenschaftlichen Beurteilung des 'Nominalstils'". Muttersprache 75: 17-23.

**Tuchel, Horst.** 1982. "Streckformen in der fachsprachlichen Kommunikation". Sprachpflege 31: 4-6.

**von Polenz, Peter.** 1963a. "Funktionsverben im heutigen Deutsch. Sprache in der rationalisierten Welt". Wirkendes Wort (Beiheft 5). Düsseldorf: 14-23.

**von Polenz, Peter.** 1963b. "'durchführen' in der Stilnot substantivischer Tätigkeitsbezeichnung". Muttersprache 73: 193-201.

**von Polenz, Peter.** 1964. "'erfolgen' als Funktionsverb substantivischer Geschehensbezeichnung". Zeitschrift für deutsche Sprache 20: 1-19.

**von Polenz, Peter.** 1987. "Funktionsverben, Funktionsverbgefüge und Verwandtes. Vorschläge zur satzsemantischen Lexikographie". Zeitschrift für Germanistische Linguistik 15: 169-189.

**Yuan, Jie.** 1982. "Funktionsverben und Funktionsverbgefüge. Definition, Klassifikation, Gebrauch und Übersetzung im Deutschunterricht für Ausländer". Zielsprache Deutsch 1/82: 1-11.

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ՀԱԳՈՒՍՏ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

Լուսիկե Ղամոյեան

Իւրաքանչիւր բառիմաստ գտնուում է պատմականօրէն տեղի ունեցող փոփոխութիւնների գործընթացում եւ ունի իր պատմական զարգացումն ու դրա օրինաչափութիւնները: Բառիմաստի պատմական փոփոխութիւնները բառապաշարի իմաստաբանական զարգացման հիմքն են կազմում: Դրա հետեւանքով բառը ձեռք է բերում նոր բովանդակութիւն եւ կիրառական նոր ոլորտներ:

Ինչպէս յայտնի է, մեր լեզուի բառապաշարի հիմնական զանգուածը կամ միջուկը գրական ժառանգորդութեամբ գրաբարից անցել է ժամանակակից հայերէնին: Դրանք կարելի է առանձնացնել հետեւեալ խմբերով. ա) բառանուններ, որոնք, գրաբարից անցնելով աշխարհաբարին, պահպանել են իրենց բոլոր նշանակութիւնները եւ կենսունակ են մեր գրական լեզուում, բ) բառանուններ, որոնց գրաբարեան իմաստների մեծագոյն մասը պահպանուել է, բայց մեկ կամ մի քանի իմաստներ չեն պահպանուել, կամ էլ մասնակի փոփոխութիւնների են ենթարկուել, գ) բառանուններ, որոնց բոլոր իմաստները պահպանուել են, բացի առաջնային իմաստից եւ այլն:

Իմաստափոխական իրողութիւնները կարելի է դիտարկել ինչպէս առանձին բառերի, այնպէս էլ բառերի թեմատիկ խմբերի առնչութեամբ:

Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ իմաստային որոշակի փոփոխութիւններ են կրել «Հագուստ» իմաստային դաշտի բազմաթիւ բառեր: Եւ քանի որ իմաստափոխութիւնը՝ որպէս լեզուական երևույթ, իր բնոյթով պատմական է, ուստի

նշուած իմաստային դաշտի բառերի իմաստափոխական իրողութիւնները դիտարկել ենք տարածամանակեայ հայեցակէտով:

Ելնելով լեզուաբանութեան կողմից մշակուած իմաստափոխութիւնների ընդհանուր օրինաչափութիւններից՝ «Հագուստ» իմաստային դաշտից առանձնացրել ենք մի քանի բառանուն՝ ցոյց տալով դրանց իմաստային փոփոխութիւններն ու տարբերութիւնները, ինչպէս՝

ա) Հագուստ կամ Հագուստի մաս անուանող բառեր, որոնք իրենց թէ՛ արտաքին հնչիւնական կազմով եւ թէ՛ ներքին բովանդակութեամբ (արտայայտած իմաստներով), նոյնը կամ գրեթէ նոյնն են մնացել գրաբարի (կամ միջին հայերէնի) համեմատութեամբ, ինչպէս՝ գրպան, լանջանոց, քող և այլն,

բ) Հագուստ կամ Հագուստի մաս անուանող բառեր, որոնք, ձեւով նոյնը մնալով եւ իրենց բուն իմաստը պահելով, ձեռք են բերել նոր իմաստներ կամ հարստացել նոր իմաստներով, ինչպէս՝ շուշտակ, վեղար, կապայ և այլն,

գ) Հագուստ կամ Հագուստի մաս (նաեւ կտորեղէն) անուանող բառեր, որոնք, արտաքին հնչիւնական կազմով նոյնը մնալով, զրկուել են իրենց հիմնական կամ այլ իմաստներից եւ ստացել նոր իմաստներ, ինչպէս՝ ստորոտ, վակաս, փակեղ(-ն), ջնջոց, չմուշկ եւ այլն:

Վերոնշեալ բառերի յետագայ իմաստափոխութիւնները ներկայացուել են ըստ գրաբարի եւ միջին հայերէնի տուեալների, քանի որ, մեր կարծիքով, համեմատութեան երակետային եզրը գրաբարում կամ միջին